

ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ՏԱՐԾՈՒԹԻ ԱՇԽԱՄԱՀ, Պատկերներու ու Պատմուածիներ.— Գեղամ Տէր Կարապետան (Գեղամ), Փարիզ, 1931, էջ 340. — Ա. Պ. Բ. Մատենացար, թիվ 3:

Հատարիս հեղինակը մին է գաւառացի մեր յայտնի զրագէտներէն: Ծնած է 1865 ին Մշոյ Դաշտի Խէցիւան զիւղը: Զաւակն է Տ. Կարապետ քահանայ Տ. Կարապետ հանի, որուն խնամքին տակ սաացած է իր նախնական կրթութիւնը: Ապա Մշոյ Ս. Կարապետ Վանքի ժառ. Վարժարանին աշակերտած է մօտ եօթը տարի, և 1883 ին աւարտած է դպրոցական չըջանը: Յետոյ երկու տարիի չափ ալ էջմիածնի Դէպրգեան ձևմաբանին մէջ մնացած է, և առանց գասընթացքը աւարտելու Մուշ վերադասնալով մտած է հանրային կեանքի ասպարէզին մէջ:

Հոս Գեղամի բազմակողմանի զործքւնէութիւնէն զրչի մշակի մասը միայն կը բաւէ ներկայացնել: Տակաւին իր պատանի հասակէն սկսած է զրել ան, և շատ բեղուն արտադրող մը եղած է: Գեղամ մշակած է բազմաթիւ ճիւղեր, և գնահատելի արգիւնաւորւթեամբ: Աւնի բանասիրական, պատմական, ազգագրական և վիպական արժէքաւոր գրութիւններ, արպուած կամ անտիպ: Իր զմաւոր երկերն են. Մշոյ Դաւառական Լեզուի Բառեր, Յիշաւակարաններ, Մշոյ Մուրասուր Ս. Կարապէ, Ապրիլան Կոտորածը, Հողային Հարցը, Տիրացուն և Ժամկը, և շատ մը յօդուածներ, ցրուած այլեւայլ թերթերու մէջ: Ներկայ հատորը կը բովանդակէ մէկ մասը Գեղամի պատկերներուն և պատմուածքներուն:

Սոյն զրքին պարունակած բոլոր գըրուածներուն մէջ առհասարակ կը զգացուի հայրենասէր և մողովդասէր սրտի մը աղնիւ բարախումը: Հայ զեղջուկ կեանքին պատկերները, զոր կուտայ ան գունագեղ զրչով մը, յաճախ տիսուր են և ցաւազին, և քիչ անգամ միայն կան տեսարաններ, որոնք մարդը մտովի կը փոխադրեն զիւղացիի մը խոնարհ խրճիթը, ուր ան կը վայելէ պահ մը, պարզ, բնական և անմեղունակ կեանքի մը հրապոյրներուն քաղցր թովչութիւնը:

Հայ ազգագրութեան և ռամկագիտութեան համար պիտանի բաւական հում նիւթ կը պարունակէ այս հատորը: Կը բանանք թուել այդ կարգի յօդուածներուն:

Կարեորները. Թղրաբաց, Դուրամն ու Աւետարանը, Հովիւ Կարօն, Մեր Լարախաղցներն ու իրենց Պաշտպան Սուրբը, Տնանկ Մարտոն, Կարն-Աղբիւր և Ման-Աղբիւր, Գեղացիի Նախապաշտում, Վեցիազարեակն ու Թղրաբար Մարտոն:

Գրքին շատ յատկանչական կողմերէն մին է իր լիգուն: Մշոյ գաւառաբարբարախուն յատուկ բառեր և ոճեր մեծ առատութեամբ կը գտնուին զրեթէ ամէն զրուածքի մէջ: Ասոնցմէ շատերը գեղեցիկ և ընտիր են իսկապէս և կ'արծէ որ ընդհանրանան: Իր կիրարկած զաւասիկ բառերու մեծ մասին բնականաբար անձանօթ է հասարակ հայ ընթերցողը: Այս պարագան նկատի առնելով Հրատարակիչները զովելի զարդարակարն ունեցած են հատորիս վերջը կցելու Բացատրական Բառուրան մը, որ անհրաժեշտութիւն մըն է զրուածներուն հասկըցողութեան համար: Հարկ է դիտել տալ սակայն որ Բառարանը փափաքուածին չափ լիակատար չէ: Ատկէ զատ ունի մէկ երկու թերութիւններ, զորս կարելի էր առանց մեծ զժուարութեան զարմանել: Զոր օր, նոյն զրով սկսող բոլոր բառերը պարզապէս իրարու ետքէ զրուած են փոխանական այլարութիւններ, զորս կարելի էր առանց մեծ զժուարութեան զարմանել: Զոր օր, նոյն զրով սկսող բոլոր բառերու ուղղագրութիւնը միօրինակ չէ, մինչդեռ զրքին բառագիտական արժէքին անսակէտով կարեօր պայման մըն է այդ: Ահաւասիկ քանի մը օրինակներ. հերդեցունց (էջ 30), բառ. հերտեցունց. պրըննոտ (36), բառ. պրնինոտ. գորեցոր (37), բառ. զոյեցոր. փեճ (38), բառ. փեճ. պրընսալ (55), պըրըխրալ (88), բառ. պըրըխսալ. գաղցտել (76), բառ. գակչտել. ճանապրուկ (109), բառ. ճամպրուկ. թաճ (133), բառ. թեճ (տաճ). եայլն:

Ն. Գ. Բարեկամներու ձեռներէցութեամբ հրատարակուած մատենաշարին նախընթաց հատորներուն առթիւ Միոնի մէջ արգէն մատնանիւ եղան այն բազմաթիւ առաւելութիւնները, որոնք յատկանիցը կը կազմն սոյն շարքին: Զանոնք հոս դարձեալ թուելու հարկ չենք տեսներ: Ներկայ հաւաքածոն ալ մնայուն արժէքի ունեցող երկ մըն է, և յանձնաբարելի է բոլոր զըրասէրներուն:

Ն. Գ. Պ.